

U $\frac{u}{620}$

10.01.01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՆԻ ՏԻԳՐԱՆԻ

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ԵՎ ԱՐԵՎԵԼՔԸ

Ժ.01.01 «Հայ դասական գրականություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2014

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ՄԱՐՏԻՆ ԳԱՐԵԳԻՆԻ ԳԻՆԱՎՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ՎԱՐԴՄԻՐ ԱՂԱՍՈՒ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
քանասիրական գիտությունների թեկնածու ԱՆԻԿ ՄԿՐՏՉԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. մայիսի 16-ին, ժամը՝ 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող ԲՈՂ-ի հայ և արտասահմանյան գրականության 003 մասնագիտական խորհրդում: (Հասցեն՝ ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. ապրիլի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար քանասիրական գիտությունների թեկնածու Ս. Ա. Մարգարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
Մ. Ա. Մարգարյան
11-620

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է Հովհաննես Թումանյանի ստեղծագործական ժառանգության այն հատվածին, որտեղ արտացոլված է մեծ գրողի հետաքրքրություններն արևելքի ժողովուրդների մշակույթների հանդեպ:

Աշխատանքում քննության են առնվել արևելյան կենսափիլիսոփայության նկատմամբ Թումանյանի յուրահատուկ մոտեցումներն ու վերլուծական մտքի խորությունն ու իմաստությունը, ինչպես նաև նրա թարգմանությունները չինական, պարսկական, հնդկական, արաբական և ճապոնական գրականության տարբեր ժանրի ստեղծագործություններից: Պատմական ժամանակաշրջանի, ինքնուրույն և արևելքի ժողովուրդների թարգմանական ստեղծագործությունների զուգահեռների միջոցով հնարավոր է դարձել բացահայտելու Թումանյան մարդու խոհափիլիսոփայական մտածողության տիրույթի եզրերը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ. ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրության առարկան Հովհ. Թումանյանի՝ արևելքի ժողովուրդների գրականությունից կատարած թարգմանություններն են՝ բանաստեղծություններ, քառյակներ, հեքիաթներ, նաև արևելյան գրականության ազդեցությունը նրա ստեղծագործությունների, հատկապես քառյակի ժանրաձևի կիրառման շրջանակում: Նպատակը գրականա-գիտական նոր հայացքով վերլուծել և ներկայացնել նրա գրական ժառանգության այն հատվածը, որը դեռևս ամբողջական ուսումնասիրության կարիք ունի, վեր հանել ինչ-ինչ խնդիրներ, որոնք զանազան պատճառներով մանրամասն քննության չէին ենթարկվել: Խոսքը հատկապես չին գրողների Լի Թայ Պոյի, Մա Խուանգ Թունգի և Կոնֆուցիոսի բանաստեղծությունների թարգմանության մասին է, որոնք ուղղակիորեն կապված են թարգմանական շրջանում հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցող պատմական իրադարձությունների հետ, ինչպես նաև քննվում են պարսիկ գրող Խաթանիի քառյակների թումանյանական թարգմանությունները:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Թումանյանի ինքնուրույն և թարգմանական գործերի մեջ ոգու և զաղափարի առումով որևէ անհամատեղելիության չենք հանդիպում, դրանք միմյանց լրացնող մի ընդհանուր շղթա են, որտեղ թարգմանական երկերը, կրելով թարգմանչի անհատական կենսափորձի և հուզաշխարհի կնիքը, միաժամանակ չեն դադարում արտահայտել բնագրային նյութի կարևոր շեշտադրումները և հեղինակային նկարագրի էական հատկանիշները:

Արևելքի գրողների ստեղծագործությունների թարգմանություններում նույնպես Թումանյանը պահպանել է նրանց գեղագիտական սկզբունքները, նրանց մտածողությունը կյանքի, մարդու դերի, նշանակության վերաբերյալ: Ավելին՝ նրա գրական ժառանգության այս հատվածի հիմնավոր քննությունը հիմք է տալիս փաստելու, որ դրանք ուղղակիորեն արձագանքում են պատմական անցուղարձի այդօրյա իրադարձություններին:

Հասարակական գործիչ Թումանյանը համաշխարհային, այս դեպքում՝ արևելքի մեծերի ձայնն էր միացնում իր կոչերին՝ ուղղված միջազգային հանրությանը և առհասարակ՝ մարդուն: Տիեզերական հոգուն վիճակված էր ականատեսը լինելու մարդկության մեծագույն ոճրագործությանը, անցնել դրա միջով ու պայքարել դրա դեմ: Ի վերսուտ բանաստեղծ կոչված, բայց իրականության հորձանուտում հայտնված Թումանյանի համար հաճախ անհասկանալի էր աստվածային առատության և մարդկային ճղճիմ հոգու այդչափ անհամատեղելիությունը, որը մեր օրերում էլ ավելի ցայտուն է դառնում՝ Թումանյանի մտահոգությանն ու բողոքին հաղորդելով միանգամայն արդիական հնչողություն: Գուցե մեծ գրողն ինքն էլ շատ հարցերում կուզենար արդեն ժամանակավրեպ դառնալ իր արծարծած խնդիրներով, բայց նրա յուրաքանչյուր միտք հնչում է նոր ու հրատապ հարցմունքի ուժգնությամբ ու ցավով:

Աշխատանքը կարող է օգտակար լինել ինչպես Հովհ. Թումանյանի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականների, այնպես էլ դասախոսների, ուսանողների և, ընդհանրապես, թումանյանասեր հասարակության տարբեր հատվածների համար:

ԹԵՄԱՅԻ ՄՇԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՆՈՒՄՅՈՒՆ

Հովհ. Թումանյանի հարուստ գրական ժառանգությունը ուսումնասիրության նյութ է դարձել դեռևս նրա առաջին գրքի՝ «Բանաստեղծություններ» /Մոսկվա, 1890/ ժողովածուի հրատարակումից հետո, երբ իրենց տարաբնույթ մոտեցումներով ու վերլուծություններով հանդես եկան Մ. Աբեղյանը, Լ. Մանվելյանը, Ն. Աղբալյանը, Լեոն. Փ.Վարդազարյանը և այլք: Հետագայում տարբեր թումանյանագետների կողմից ամենայն մանրամասնությամբ մեկնաբանվեցին նրա պոեմներն ու պատմվածքները, լեզենդներն ու բալլադները, հեքիաթներն ու քառյակները: Թումանյանագիտության մեջ իրենց մնայուն գնահատական-վերլուծական խոսքն են ասել Ա. Ինճիկյանը, Ն. Թումանյանը, Էդ. Ջրբաշյանը, Լ. Հախավերդյանը, Հ. Թամրազյանը, Լ. Վարապետյանը, Ա. Եղիազարյանը, Ա. Վարդանյանը և այլք: Այդուհանդերձ, հայ գրականագիտության մեջ դեռևս ամբողջական բացահայտված չէր Հովհ. Թումանյանի՝ արևելքի գրականության ու փիլիսոփայության նկատմամբ ունեցած առանձնահատուկ մոտեցման հանգամանքը՝ թե՛ որպես

թարգմանչի, թե՛ այդ խոհերի տիրույթում որոնումների ճանապարհ անցած մարդու:

Մույն աշխատանքի նորույթը արևելքի ժողովուրդների բանահյուսական, գրական, փիլիսոփայական և առհասարակ մշակութային ժառանգության նկատմամբ Հովհ. Թումանյան մարդու և թարգմանչի յուրահատուկ և տևական հետաքրքրությունների խորքային և հանգամանակից վերլուծությունն է: Այդ նպատակով նախ ուսումնասիրվել են Հովհ. Թումանյանի ստեղծագործությունների վերաբերյալ մինչ այժմ եղած գրականագիտական հիմնական աշխատությունները, ուսումնասիրություններն ու հոդվածները, նրա անձնական գրադարանում պահվող արևելքի թեմային վերաբերող բազմաթիվ գրքեր, որոնց վրա առկա են նաև բանաստեղծի ձեռագրային նշումները, արխիվային դեռևս չտպագրված նյութեր, գիտության պահանջներից ելնելով՝ ժխտվել կամ հաստատվել են թեմային առնչվող կարծիքները, ներկայացվել ինքնուրույն տեսակետներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՄԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության հիմքում ընկած է դասական գրականագիտության փորձը և արդի գիտական նվաճումները: Կիրառվել են պատմական, համեմատական-տիպաբանական մեթոդները, ժամանակագրական-կենսագրական և գրական երկի քննության համակարգային ու ամբողջական վերլուծության սկզբունքները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Հայ նոր գրականության ուսումնասիրման բաժնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության: Հեղինակը հաշվի է առել արված օգտակար դիտողությունները, որոնք ամբողջական տեսքի են բերել ատենախոսությունը:

Աշխատանքի որոշ հիմնադրույթներ և եզրահանգումներ արտացոլված են հանրապետության գիտական հանդեսներում հրապարակված հոդվածներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից (երրորդ գլուխը՝ չորս ենթագլխից), եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, կցված է նաև երկու հավելված:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ համառոտ ներկայացվում է հարցի պատմությունը, նյութի որոշ հատվածների ուսումնասիրվածության աստիճանը, թեմայի արդիականությունն ու գիտական նորույթը, պարզաբանվում են ատենախոսության նպատակներն ու խնդիրները:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՄԱՐԴԸ ԵՎ ԳՐՈՂԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԿԵՆՍԱՓԻԼՍՈՓԱ-ՅՈՒԹՅԱՆ ՉՈՒԳԱՀԵՆՆԵՐՈՒՄ

Արևելքը Թումանյանի համար հոգեպես հարազատ էր ու մտերիմ: Մանրակրկիտ ու տեսական ուսումնասիրությունները, արևելքի պատմությանը և մշակույթին վերաբերող գրքերի ընթերցումը հնարավորություն են տվել մեծ գրողին բազմաթիվ գուգահեռներ տեսնել իր երկրի և արևելքի հին ու մեծ մշակույթային ազգերի պատմության միջև, հասկանալու, որ իր ազգի ողբերգությունը արևելքի շատ ժողովուրդների ողբերգությունն էր:

Տասական թվականներին Թումանյանի հետաքրքրությունը արևելքի հանդեպ էլ ավելի է խորանում: Նա սկսում է ուսումնասիրել արևելքի հին ազգերի պատմությունը, նրանց փիլիսոփայությունը, գրականությունն ու բանահյուսությունը, թարգմանում արևելքի մի շարք գրողների: Եվ սա այն համոզմունքով, որ անգամ ընկերների հետ գրուցելիս էլ ցավով նկատում էր, թե՛ «Արևելցի ենք, բայց Արևելքը չենք ճանաչում, ամոթ է: Չենք ճանաչում ընդհանրապես մեր հարևաններին, ծանոթ չենք նրանց գրականությանը: Դարերով ապրում ենք իրար կողքի, հարևանություն ենք անում իրար հետ, բայց չենք իմանում ինչ է նրանց միտքը, նրանց արվեստը...»¹:

Հասարակական ակտիվ գործունեություն ծավալող, ազգի ու մարդկության հարցերով տառապող բանաստեղծին այլևս փափագելի էր «հոգևոր Արևելքը»: Եվ անընդհատ և բազմակողմանի ուսումնասիրությունները ժամանակի ընթացքում ավելի ու ավելի են հիմնավորում նրա կողմնորոշումը:

Թումանյանը 1910-ական թվականներին առանձնակի ուշադրությամբ էր ուսումնասիրում հնդկական փիլիսոփայությունը: Երկիր մոլորակի ձևավորման և մարդկային կյանքի սկզբնավորման հարցը համամարդկային քննության առարկա է եղել շատ վաղ ժամանակներից: Այդ ամենի որոնման և հարցերի անվերջանալի շղթայի պտույտը կրկին բերում է ելակետին և մտում անպատասխան: Եվ այդ հարցերի պատասխանը Հովի. Թումանյանը որոնում էր հնագույն հնդկական վեդաներում՝ դրանցից կատարելով նաև

¹ Թումանյան Ն., «Հուշեր և զրույցներ», «Լույս» հրատ., Երևան, 1987թ., էջ 208:

թարգմանություններ: Ըստ այդ վեդաների՝ գոյության ու անգոյի, կա ու չկայի սահմանագիծը կերտողներից մեկը բանաստեղծն է: Եվ այն ժամանակ, երբ դեռ չկար անմահություն և մահ, «և ոչ խտիր օրի մեջ ու գիշերվա», երբ մութը ծածկված էր մութով, և «աշխարհը ողջ մի վիճ էր խավարչտին», պոետը՝ փնտրելով բանականությունը, գոյության ու անգոյության կապը գտավ սրտի մեջ...

Թումանյանը քաջատեղյակ էր նաև հին հնդկական առասպելներին, ավելին՝ հաճախ իր լեզվաբանական-գրականագիտական վերլուծություններում, հատկապես հայկական էպոսի հետ կապված ինչ-ինչ հարցերին անդրադառնալիս, թեկուզ հպանցիկ, բայց շատ հավանական գուգահեռներ է անցկացնում հայ և հնդկի դուցազունների միջև: Բնութենապաշտ գրողի համար հոգեհարազատ էին հնդկական փիլիսոփայական մտքի այն դրույթները, որոնց հիմնակետում մարդկային տառապանքի անվերջանալիությունն է և ճանապարհը դրանից շեղվելու, բնության թելադրած ընդհանուր կարգին ներդաշնակվելու, վայելելու տիեզերական ուժի կողմից նախասահմանված հնարավոր բոլոր մարդկային վայելքները: «Թումանյանի հումանիզմը չի հանդուրժում մահը, չի հաշտվում մահվան ողբերգականության հետ: Նրան խորապես հուզում է հավերժության իմաստը, և նա ձգտում է փիլիսոփայորեն հաղթահարել մահը»²: Ոչ միայն ձգտում էր, այլև ի վերջո հասավ և հաղթեց նա մահվանը՝ դառնալով անմահ ու հավերժի ճամփորդ:

Արևելքի բարությունն ու խաղաղությունը Թումանյանը զգում էր նաև իր ժամանակակից հնդկի բանաստեղծ, արձակագիր, փիլիսոփա Ռաբինդրանատ Թագորի ստեղծագործություններում, սակայն աներևույթի նկատմամբ նրանք տարբեր վերաբերմունք ունեին: «Թագորը շատ է նուրբ ու զեղեցիկ: Դեմքի արտահայտությունը Լոնգֆելլոյին է հիշեցնում, խոշոր դեմք է անպայման... Իմ և Թագորի մեջ, մեր վերաբերմունքի մեջ դեպի աներևույթը – մեծ տարբերություն կա. ես առանց ակնածության եմ հետը խոսում, մեջս երկյուղ չկա, իսկ Թագորը՝ երկյուղով»³:

Թումանյանը հատուկ հետաքրքրությամբ է ուսումնասիրել նաև չին ժողովրդի գրականությունը և կատարել մի քանի բնութագրական թարգմանություններ:

1916 թ. – Եղեռն և պատերազմ տեսած ու ապրած բանաստեղծ, որի ֆիզիկական ու հոգեկան ողջ ուժերն արդեն տեղի էին տվել, բաժան-բաժան էր եղել ընտանիքը, անհայտ հանգամանքներում սպանվել էր եղբայրը, առկախ էր ողջ ազգի հետագա գոյության հարցը: Ականատեսների մահասարսուռ

² Մկրյան Մ., «Հովի. Թումանյանի ստեղծագործությունը», «Սովետական գրող» հրատ., Երևան, 1981թ., էջ 119:

³ Թումանյան Ն., «Հուշեր և զրույցներ», էջ 306:

պատմությունները այլևս խորտակում են բանաստեղծի հանդարտ ու համբերատար հոգին, որի բուն ժայթքումն էլ դառնում է «Դժոխքի հանդեպ» բանաստեղծությունը: Ու դեռ քանի այսպիսի բանաստեղծություններ պիտի ծնվեն ու «պղծեն» պոետի «շուրթերն անեծքով», եթե չլինե՞ր հոգեկան «փախուստ»-ը իրականությունից: Նույն թվականի ամռանը առողջական վիճակը մի քիչ թեթևացնելու նպատակով Թումանյանը Նվարդի հետ եղավ Բորժոմում. «Բավական գրքեր էր բերել Արևելքի պատմությունից և գրականությունից: Զբաղվում էր պարսկական և չինական գրականությամբ: Միքում էր կարդալ չինական գրականությանը նվիրված «Свирель Китая» ժողովածուն»⁴: Հենց այդ գրքից էլ թարգմանեց Լի Թայ Պոյի «Կարմիր վարդը», Մա-Խունանգ-Թունգի «Մերժվածը», Կոնֆուցիուսի «Մարդու ճակատագիրը» բանաստեղծությունները:

Այսպիսով՝ Թումանյանը, իր խոհերին հաղորդակից դարձնելով արևելքի մեծերին, թարգմանելով նրանցից հատվածներ և ամբողջական երկեր՝ ձգտում էր բացահայտել տիեզերական հավերժական ու անմեկնելի գաղտնիքները, ինչպես նաև այդ անհունության մեջ մարդկային կյանքի արժեքն ու նպատակը: Հոգու վերթումներ էր տալիս հզոր Արևելքը՝ իր մեջ ներառելով այնքան բազմազան, բայց և այնքան համաձույլ և փոխլրացնող մշակույթներ ու փիլիսոփայական մտքեր:

ԳՆՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ

ՔԱՌՅԱԿ ՈՐՊԵՍ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՀՈԳՈՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թումանյանի հարուստ և բազմաձև գրական-ստեղծագործական շտեմարանում իրենց ուրույն տեղն ունեն մտքի բարդ խտացումների փոքրածավալ գործերը՝ քառյակները: Բանաստեղծն այս ժանրին անդրադարձավ առավելապես կյանքի վերջին տարիներին՝ կարծես հանրագումարի բերելու կյանքի անցած ողջ ճանապարհը: Շատ բան տեսած, շատ բան ապրած բանաստեղծի համար ինքնամփոփ մտորումների դաշտ էր դարձել Արևելքը, իսկ այդ խոհերի արտահայտման ձևը՝ քառյակը: Անձնական, ազգային ու համամարդկային վիշտն ու թախիծը կրող բանաստեղծի հոգին լուսեղեն ոլորտներ հասնելու ինքնամաքրման ուղիներ էր որոնում: Էպիկական բանաստեղծության խոշորագույն վարպետը հայացքն ուղղեց «դեպ Արևելքն աստվածային» և այնտեղ սկսեց որոնել «հայրենիքը իր հոգու»:

Ստեղծագործական առումով Թումանյանը տասական թվականների երկրորդ կեսին արդեն այնպիսի մակարդակի վրա էր, որ պիտի մղեր իրեն իր երազած խտացված մտքերի արտահայտման ձևին. նա դեռ վաղ տարիքից մշտապես հակված էր հստակ ու ավարտուն՝ «աչքի պես պարզ ու աչքի պես

⁴ Թումանյան Ն., «Հուշեր և գրույցներ», էջ 148:

բարդ» արտահայտման ձևերի որոնման: Արևելյան պոեզիայի ավանդական ձևերից մեկը՝ քառյակը (ռուբայի, բայաթի, հայրեն, կաֆա) դրա համար ամենից հարմար միջոցը դարձավ: Քառյակը հնարավորություն էր տալիս բանաստեղծին հասնելու ծայրաստիճան սեղմության, խոսքի միջոցների առավելագույն տարողունակության հատկանիշներ, որոնց Թումանյանը ձգտել էր իր ողջ ստեղծագործական կյանքում: «Քառյակները շատ նուրբ, ազնիվ, խորը և գեղեցիկ բաներ են: Ես առաջ Պուշկինի, Լերմոնտովի ազդեցության տակ էի, հիմա Արևելքին եմ գալիս. գալիս եմ դեպի մերը...»⁵:

Բովանդակային դաշտում արևելյան դասական և Թումանյանի քառյակների միջև մի զգալի տարբերություն կա: Խոսքը ինքնահակադրման փաստի առկայության կամ բացակայության մասին է: Արևելյան, հատկապես պարսիկ քառյակագիրների մոտ, հաճախ ենք հանդիպում կյանքի ընթացքի փոփոխությանը զուգընթաց նախկինում գրված քառյակներում արտահայտած մտքի հետագա հակասման: Մա Թումանյանի մոտ բացակայում է: Ներքին մի ամուր կապով հյուսված քառյակները՝ անզամ իրենց ժամանակագրական և տպագրական հաջորդականությամբ, մի ամբողջական ստեղծագործության տպավորություն են թողնում: Այնտեղ չկա փնտրտուք, որոնում, այլ երևույթը հստակ իմացողի ամուր ու հաստատուն խոսք է հնչում:

Հարկ է նշել, որ եթե Թումանյանի քառյակների մի ակունքը, առավելապես ձևինը, արևելյան բանաստեղծությունն է, ապա մյուսը, առավելապես բովանդակությանը, հայ միջնադարյան տաղերգությունն է, և ամենից առաջ՝ Գ. Նարեկացին: Թումանյանին Նարեկացու հետ կապողը, անշուշտ, Աստծո՝ նույնն է թե Անհայտի, Անհունի հետ սրտի խորքից խոսք բացելու սերն է, մարդու իդեալի բացահայտման և կերտման մշտավառ կարոտը, Անճառի, Անտեսի հետ ձուլվելու վսեմ գաղափարը: Իսկ տիեզերքի հետ զրուցելը նա «ալեհեր հնությունից» եկող ավանդական զբաղմունք է համարել հայկական ոչ միայն բանաստեղծության, այլև կյանքի, իրականության համար. «Հնագույն Հայաստանի բնակիչները, որսկան, հովիվ ու անասնապահ, միշտ բաց երկնքի տակ, իրենց բարձր երկնամերձ աշխարհքում միշտ խոսել են աստղազարդ երկնքի հետ»⁶: Թումանյանը էությանը և կեցության փիլիսոփայական իմաստավորման մշտական նախասիրությամբ էր կապված այդ մշակույթին:

Իր բանաստեղծական կյանքի արևածագը արևմուտքի և ռուսական պոետների ազդեցությամբ լուսավորած Թումանյանն իր մայրամուտը լուսավորեց արևելյան երգիչների ազդեցությամբ: Երևույթի հիմքը միայն գեղագիտական չէր: Առհասարակ 1914-ից Առաջին համաշխարհային

⁵ Թումանյան Ն., «Հուշեր և գրույցներ», էջ 221:

⁶ Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու հ. 8, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1999 թ., էջ 273:

պատերազմից ի վեր, Թումանյանին համակել էր խորին հիասթափություն Արևմուտքից և սքանչացում Արևելքով:

Արյունալի աղետներով, աղմուկներով անհարկու,
Արևմուտքի ըստրուկները մեքենայի ու ոսկու
Իրենց հոգու անապատից խուսափում են խուտներամ
Դեպ Արևելքն աստվածային – հայրենիքը իմ հոգու...

Եվ բանաստեղծի հոգին սկսեց որոնումների ճանապարհը: Դրանք հստակ ուղեգծված որոնումներ էին, պարզության, անշահախնդրության, զվարթության ու ուրախ սրտի հայտնաբերման փնտրտուք, որ ամենադժվար բանն է կյանքում: Բայց Թումանյանը զիտեր դրանց գոյության ակունքը, դեպի ուր և ձգտում էր.

Արևելքի եղեմներին իջավ պայծառ իրիկուն,
Զեքիաթական պալատներում ըսպասում են իմ հոգուն.
Ինչ եմ շինում էս ցեխերում, աղմուկի մեջ վայրենի...

Ա՛յ թե նորից զբռնեմ ճամփան դեպի էնտե դ, դեպի տո՛ւն...

Սա բանաստեղծի կյանքում ունեցավ և՛ գեղագիտական, և՛ մինչև անգամ կենցաղավարական անդրադարձ: «Վերջին տարիները շատ էր սիրում այսպես ասած արևելյան ձևով ապրել. դա քառյակների շրջանն էր, – մտաբերել է Թումանյանի դուստրը: – Մենյակը կահավորել էր արևելյան ճաշակով – խալիներ էր փռել, թախտ, բարձեր, քիրմանի շալով ծածկել, զանազան նկարներ, գրավուրներ ու արձանիկներ էր գնել՝ ճապոնական ու պարսկական, չինական, գեղեցիկ իրերով զարդարել: Ղայան էր առել, թեև չէր ծխում, զանազան ձևի չիրուխներ՝ տիրուլի, պարսկական և զանազան գույնի մուշտուկներ: Իր մուշտուկը դեղին քահրբարից էր՝ ծայրը կարմիր: Սկսել էր երբեմն ծխել, ինչպես ինքն էր ասում՝ «շախի խաթեր»: Մահճակալի կողքից կախել էր կարմիր փայտից ծաղկանկար մի թղթապանակ, մեջը թուղթ, մատիտ էր դնում. դա քառյակների տեղն էր: Գիշերները գրած քառյակները դնում էր դրա մեջ»⁷:

Թումանյանը ժանրի ընտրությանը զուգահեռ՝ պարսից քառյակագիրների մեջ բարձր էր դասում հատկապես Օմար Խայամին, որի մեջ նա տեսնում էր կենսական և իմաստասիրական ամենաբարդ խնդիրները փոքր ծավալի մեջ արտահայտել կարողացող հզոր մտքի տեր ստեղծագործողի: Եվ հենց Խայամի մոտիվների ներշնչմամբ էլ պիտի գրեր Թումանյանը իր քառյակներից մեկը:

Թումանյանական գրչի տակ քառյակը խոհական-փիլիսոփայական շեշտված մտքի արտահայտություն է՝ հազեցած աշխարհի ու մարդու կոչման խորհրդածություններով: Ի տարբերություն միջնադարյան հայրենների՝ բովանդակային առումով Թումանյանի մոտ բացակայում են սիրային ու

⁷ Թումանյան Ն., «Չուշեր և գրույցներ», էջ 82:

բարոյախրատական մոտիվները: Նրա մտորումների հիմնական ոլորտը աշխարհի ու մարդու կեցության «վերին հարցերն» են:

Արևելյան փիլիսոփայությանն ու գրականությանը քաջատեղյակ Թումանյանը կյանքի վերջին ամիսներին տիեզերական անհունության մասին իր խոհերին ընկերակից է դարձնում պարսից գրականության մեծագույն և հանճարեղ դեմքերից մեկին՝ Ա.Ֆգել աղ Դին Խաքանիին: Ինչպես վկայում է Թումանյանի դուստրը՝ Նվարդը, 1922 թ. գարնանը, երբ անընդհատ լսում էր բժիշկների միմյանց հակասող վերլուծություններն իր առողջության վերաբերյալ, շարունակում էր պարապել. «նրան զբաղեցնում էին «Մասունցի Դավիթը», մանկական գրականությունը և արևելքի բանաստեղծները հատկապես պարսիկ և չին բանաստեղծները: Ավելի ուշ անցավ Խաքանիի քառյակների թարգմանությանը»⁸:

Չնայած Թումանյանը քառյակները թարգմանել է ռուսերենից, սակայն կարողացել է զգալ բնագրի գաղափարական ու բանաստեղծական ոգին, և արտահայտել դա քառյակի ժանրային ձևի ամբողջական պահպանմամբ: Անշուշտ, մինչև քառյակների թարգմանությունը՝ բանաստեղծը ծանոթացել և ուսումնասիրել էր պարսիկ քառյակագրի կյանքի մանրամասները, նրա մտածողության ու հետաքրքրությունների զանազան ոլորտները: Սա Թումանյան թարգմանչի համար նախապայման էր բանաստեղծական այդ աշխարհը լիովին ընկալելու, հոգեբանական և զգացմունքային ինչ-ինչ շերտեր իր համար բացահայտելու, նաև տվյալ հեղինակի ապրած ժամանակաշրջանին ծանոթ լինելու համար:

Թումանյանի դեպքում թարգմանված նյութը նաև հոգեվիճակի դրսևորում է: Իր համար այնքան թանկ ու կարևոր մարդկանց կորուստը չսպիացող վերքի պես մշտապես մորմոքում էր բանաստեղծ հոգին: «Որ աշխարհքում ունեմ շատ բան. միտք եմ անում՝ էս, թե էն» ու այդ երկուսի մեջտեղում կանգնած՝ նորից ծնվում են կյանքի ու մահվան բախման հավերժական հարցերը. «Ի՞նչ է կյանքը, մահը... Միստիկները գտել են, որ ներքին կապ կա մեռածների և նրանց ապրող հարազատների միջև»⁹: Միստիկական մտորումներով Խաքանին էլ որոնում ու սպասում է իր կորցրած հարազատ հոգիներին.

اورفت و دلم باز نیامد ز برش
من چشم به ره گوش به در بر اثرش
چشم آید زی گوش که داری خیرش
گوی آید زی چشم که دیدی دگرش

Նա որ զընաց՝ սիրտս էլ զընաց ու ետ չեկավ իր մոտից,
Աչքըս ճամփին ու ականջըս միշտ դրոսան է կարոտից.

⁸ Թումանյան Ն., «Չուշեր և գրույցներ», էջ 260:

⁹ Թումանյան Ն., «Չուշեր և գրույցներ», էջ 171:

Այքս է դառնում մին ականջիս, թե լուր չունե՞ս էն օրից,
Մին ականջս է դիմում աչքիս, թե չե՞ս տեսել դու նորից...

Եվ այս ամենին հասու լինելու համար մարդ պետք է ունենա հզոր մտքի ճառագում, նրա հոգին հաղորդակից պետք է լինի բոլոր գիտություններին, որպեսզի խորանա, բարձրանա, «վեհ ու վսեմ բաներով ապրի, բարձունքներ գնա»: Բայց միաժամանակ ամեն վայրկյան պետք է զգա այն հզոր ուժի գոյությունը, որը սահմանում է յուրաքանչյուր կենդանի էակի երկրային կյանքի սկիզբն ու վախճանը: Հենց դա էլ պիտի լինի չգրված այն պատգամը, որ մարդ էակը ներդաշն ու համաձույլ լինի արդեն սահմանված կարգին՝ բնության հզոր ու անխաթար կարգին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Հեքիաթի մշակման ու թարգմանության-փոխադրության թումանյական սկզբունքները

Հեքիաթը՝ որպես ժողովրդական իմաստության խտացում, Թումանյանի ուղեկիցն է եղել դեռ մանուկ տարիքից, երբ Լոռվա հրաշավառ բնության մեջ մեծացող փոքրիկին մայրն անընդհատ պատմում էր հեքիաթներ, Լոռվա իգիթների մասին առասպելներ, նախապապերի քաջագործություններն ու նրանց հերոսական պատմությունները:

Ինքնակենսագրական գրառումներում առանձին շեշտվածությամբ են արտահայտված այդ ամենի նկատմամբ մանուկ Հովհաննեսի տպավորությունները, որոնք, որպես նվիրական հիշողություններ, թևածուր էին նրա մտքում:

«Կնանիք մեզ վախեցրին իբրև քաջքեր, Թագուհին – հեքիաթ, Նեսուն և այլ հեքիաթներ:

Իմ պապերից պատմություններ:

Մեր մեծերից կենդանի մնացածները և նրանց գրույցը:

Մելքոնանց Օհաննեսի առակները»¹⁰ ...

Եվ այս ամենն իր մեջ կրելով՝ հետագայում անիմաստ, հոգի մաշող, բայց հարկադրված բանակրիվներում Թումանյանը վստահ պիտի շեշտեր. «...ես լռեցի եմ ու էն զլխից, ոչ «դիպվածով» սիրել ու հետաքրքրվել եմ հեքիաթներով, լեզենդներով, առակներով, և շատերն անգիր գիտեմ դեռ մանկուց»¹¹:

¹⁰ Պատմա-Բանասիրական հանդես, ԳԱԱ, առանձնատիպ, N1 (32), Երևան, 1966թ., էջ 178:

¹¹ Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու հ. 6, էջ 164:

«Թումանյանն ուներ հեքիաթի ժանրի գիտական մոտեցում, հեքիաթի պոետիկայի առանձնահատուկ գրեթե անատոմիական ընկալում, որ ավելի ուշ հեքիաթի մեծագույն տեսաբան Վլ. Պրոպր վերածեց հեքիաթի ճշգրիտ տեսության»¹²:

Հեքիաթի մշակման գիտական-տեսական չափանիշների մասին Թումանյանը առանձին հոդվածային անդրադարձ չունի, սակայն այս կամ այն կերպ նա արտահայտել է իր իմացության լայնությունը:

«Կղերական բթամիտ դրամբյանների» դեմ պայքարող գրողը հաճախ հարկադրված է եղել պատասխան հոդվածներով հանդես գալ, որոնց մեջ էլ արտահայտվում են նրա հեքիաթ մշակելու կամ թարգմանելու սկզբունքները. «...էն ժողովրդական հում նյութերի համար է, որ բանահավաքները գրում են՝ որտեղ են լսել, երբ են լսել, ով է պատմողը, քանի տարեկան և այլն, և այլն, որովհետև էն արձանագրություն է, պրոտոկոլ է, և պարտավոր են նույնիսկ նրա սխալներն էլ էնպես գրի առնելու, ինչպես որ կան: Իսկ մշակածի, գրական լեզվով պատմած, փոփոխածի, զանազան վարիանտներից կազմածի, չափական ձևի վերածածի վրա չպետք է էլ գրվի, նա արդեն ժողովրդականը չի, թեև բնագիրը ժողովրդիցն է առած»¹³: Թումանյանը քաջատեղյակ էր հեքիաթամշակման համաշխարհային չափանիշների, օրինակներ էր բերում ժողովրդական նյութի մշակմամբ զբաղված խոշոր գրողների՝ Եզոպոս, Լաֆոնտե, Կոլիով, Ոլիմպիանոս, Գյոթե, Պուշկին, Գրիմ եղբայրներ: Հեքիաթների մշակման գործին զուգահեռ՝ Թումանյանն իր ստեղծագործական ժառանգությունը հարստացնում էր նաև թարգմանական նյութերով:

Մեր աշխատանքի այս բաժնում անդրադառնալով Թումանյանի թարգմանական հեքիաթներին, մասնավորապես՝ արևելյան (հնդկական, ճապոնական, արաբական) հեքիաթներին, էլ ավելի մարամասն քննել ենք նրա հեքիաթագիտության և հեքիաթամշակման մեթոդների իմացության խորությունն ու տարողունակությունը: Եթե նախորդ գլուխներում քննության նյութ դարձած թարգմանական գործերում Թումանյանը ավելի հարազատ էր մնացել բնագրին և կատարել հոգեշունչ թարգմանություններ, ապա բանահյուսական այս ժանրի՝ հեքիաթի դեպքում, նա հանդես է գալիս ոչ թե սոսկ թարգմանիչ, այլ նաև ուսումնասիրող, համեմատող և հեքիաթագետ: Ինչպես հայ ժողովրդական հեքիաթների մշակման ժամանակ, այնպես էլ օտար հեքիաթների թարգմանության դեպքում Թումանյանը նախ և առաջ հավաքում էր հեքիաթների տարբերակները, դրանցից ընտրում և թարգմանում էր ամենաբնորոշ, ամենաէական տարբերակը՝ մյուսներից օգտագործելով ինչ-ինչ անհրաժեշտ հատվածներ: Անհրաժեշտության

¹² «Հենզելն ու Գրետելը. Կարմրիկը», «Զանգակ-97» հրատ., Երևան, 2013թ., էջ 7:

¹³ Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու հ. 7, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 1995թ., էջ 71:

դեպքում փոփոխում էր հերոսների անվանումներն ու կատարում չափածո հատվածների հավելումներ՝ մատուցվող նյութն ազգային մտածողության յուրահատկություններին ավելի մոտեցնելու, ասելիքը ամբողջությամբ տեղ հասցնելու նպատակով:

Թումանյանին շատ է հրապուրել արևելյան հեքիաթը՝ ժողովրդական երևակայության իր գունագեղ ու իմաստուն աշխարհով: Նրա գրադարանում կարելի է գտնել արաբական, չինական, հնդկական, ճապոնական հեքիաթների բազմաթիվ հրատարակություններ ու տարբերակներ:

Թարգմանության համար ընտրված հեքիաթները նրա ողջ ստեղծագործական ասելիքի ընդհանուր շղթան լրացնող օղակներ են, որոնք կամ ամրապնդում են նրա արտահայտած մտքերն ու գաղափարները, կամ արտահայտում նոր խոհերն ու մտորումները: Որպես համամարդկային արժեքներ՝ Թումանյանը երբեք չի ձգտում նյութի մեջ կիրառելու ավելորդ լրացումներ՝ տվյալ ժողովրդի ազգային կոլորիտը շեշտադրված ներկայացնելու համար, որովհետև թարգմանության նպատակը բնավ էլ դա չի եղել: Այլ ինչ-ինչ հարցերի շուրջ մարդկային մտածողության այն ընդհանուր դրսևորումները, որոնք իրենց արտահայտչաձևն են գտել հեքիաթի ժանրի միջոցով: Ինչպես հայկական ժողովրդական հեքիաթների մշակման դեպքում չափազանց հարուստ է Թումանյանի ստեղծագործական լաբորատորիան, այնպես էլ արևելյան հեքիաթների պարագայում:

Բ. Հնդկական հեքիաթներ

(«Ռսկի քաղաքը», «Աստղերից իջած կինը»)

Ռսկի քաղաքի գաղափարը Թումանյան մարդու և փիլիսոփայի խոհերի տիրույթից դուրս չէր, ավելին՝ կյանքի ոլորապտույտ ճանապարհները կրկին ստիպում էին նրան անդրադառնալու այդ կետին և առաջարկելու ելքի նորանոր ուղիներ: Արդեն իր նախորդ ստեղծագործությունների մեջ ինչ-ինչ տարբերակներով արծարծած խնդիրները Թումանյանը փորձում է լրացնել հնդկական հեքիաթի թարգմանությամբ, որը ինքնուրույն ստեղծագործության համարժեք աշխատանք է:

Տարբեր ժողովուրդների մեջ տարածված հեքիաթային այս սյուժեն մշակելիս Թումանյանը հիմք է ընդունել Յու. Դունգերի ռուսերեն թարգմանությունը, որը հրատարակվել էր Ա. Նեելովայի կազմած «Сто сказок разных стран и народов» ժողովածուում:

Հիմք ունենալով ռուսերեն թարգմանությունը՝ Թումանյանը, այնուամենայնիվ, կերտել է իր պատկերացրած աշխարհն ու սահմանել այդ աշխարհի կարճ ու կանոնը: Բազմաթիվ են տարբերությունները ռուսերեն տարբերակի հետ համեմատած: Տարբերությունները և՛ իմաստային են, և՛

գաղափարական, և՛ ելակետային: Յուրաքանչյուր հատվածում երևում են հեքիաթ մշակող վարպետ-իմաստունի առավելություններն ու սիմվոլների աշխարհին այդքան քաջատեղյակ լինելը: Չկան ավելորդ հատվածներ, գործողությունները կատարվում են սրբնթաց՝ ընթերցողին պահելով նույն դրության մեջ, ինչպես ունկնդիրը կլսեր մի ծերունի հեքիաթասացից հին դարերի մի հեռավոր պատմություն, որ այնքան համամարդկային է ու հավերժական:

«Ռսկե քաղաքը» հեքիաթում բանաստեղծական հատվածները Թումանյանի գրչի ծնունդն են, դրանք ապահովում, հաճախ նաև շեշտադրում են սյուժեի քնարականությունն ու հուզականությունը՝ ընթերցողի հոգում ստեղծելով արևելյան երգախառն պատումի մի ողջ աշխարհ:

Ջուզահեռաբար համեմատության մեջ դիտարկվել է նաև իսահակյանական «Ռսկի քաղաքը», ուր գենքը ձեռքին կանգնած գորապետն ու զինվորը դառնում են հողը հերկողներ, արհեստն ու զիտությունը ճոխացնողներ, ուր վաճառականի կրպակի փոխարեն ամեն մարդ իր արդար վաստակը պիտի փոխանակի մյուսի հետ, և կրոնավորների դասն էլ պիտի միանա աշխատող ու արարող մարդկանց, քանզի աստծո ու մարդու միջև միջնորդի հարկը չկա, դարեր անց այլևս երազանքի անհասանելի աշխարհ է դառնում մարդկության համար. «Մարդիկ կորցրին «Ռսկի քաղաքի» ճանապարհը և հիմա ոչ ոք չգիտե, թե ինչ ճանապարհով պիտի գնալ գտնելու երջանիկ, Ռսկի քաղաքը»¹⁴:

Մինչդեռ այս հեքիաթը Թումանյանի ուտոպիական երազանքն է, որն ուներ հասնելու իր ուրույն ճանապարհը, իսկ «ի՞նչ է երջանկությունը» հարցի պատասխանը միանշանակ է.

Աշխատել լավ ճանապարհի վրա ու գոհ լինել իր ունեցածով:

Անշուշտ, հեքիաթի ժանրն իր հնարավորությունների ընդարձակությամբ մշտապես հնարավորություն է ընձեռում թարգմանչին, փոխադրողին կամ մշակողին կերտելու իր աշխարհընկալման ու ձգտումների ելակետը՝ հիմքում ունենալով նաև այդ ամենի համար հստակ սահմանված չափորոշիչներ: Ինչպես նկատում է Ա. Ջիվանյանը. «Հեքիաթը՝ որպես բանահյուսական տեքստ, օժտված է գրեթե անսահմանափակ բազմիմաստությամբ, քանզի կրում է անհամար ժամանակային շերտերից գոյացած իմաստներ՝ անհայտ թվով պատմողների մեկնությամբ և լայն տարածական ընդգրկումով ներկայացրած: Հեքիաթի յուրաքանչյուր առանձին պատում, եթե

¹⁴ Բսահակյան Ավ., Երկերի ժողովածու, վեց հատորով, հ.3, «Հայաստան» հրատ., Երևան, 1975թ., էջ 168:

անգամ նույն պատմողի և նույն հեքիաթի տարբեր կատարումն է, արդեն նոր մեկնություն է»¹⁵:

Ուստի հստակ առավելություն չտալով նյութի որևէ մեկնաբանության հարկ է նշել, որ թումանյանական լավատեսությունը և մարդու ուժի ու հնարավորությունների մասին նրա ունեցած դատողություններն ուղղակի ևս մեկ անգամ ամրապնդվում և արտահատվում են հնդկական հեքիաթի մշակման յուրահատուկ մեկնությամբ:

Հնդկական մյուս հեքիաթը, որ ռուսերենից թարգմանել է Թումանյանը, «Աստղերից իջած կինը» հեքիաթն է: Նյութն ընտրել էր Գ. Կեննեդիի կազմած և հրատարակած «Индийские сказки» (СПб., с. 227-242) ժողովածուից: Ամերիկյան «կարմրամորթների» կյանքը, հավատալիքներն ու երազների աշխարհը իր գունագեղությամբ, երջանիկ կյանքի կերտման իր ինքնատիպ մեկնություններով է արտահայտվել «Աստղերից իջած կինը» հեքիաթում:

Ի տարբերություն «Ոսկի քաղաքի» գաղափարական շերտի խորությանը, որն ամբողջականացնելու համար Թումանյանը կատարել էր մի շարք արձակ և չափածո հավելումներ, նաև խտացումներ, ոչ կարևոր հատվածների բացթողումներ, «Աստղերից իջած կինը» հեքիաթը գրեթե անփոփոխ թարգմանություն է ռուսերեն օրինակից: Բաց են թողնված միայն մուտքի և ավարտի՝ ասացողի և ունկնդրի միջև ծավալվող երկխոսությունները, որոնք որևէ կերպ չեն լրացնում կամ հավելում հեքիաթի բուն բովանդակությունը: Մնացած տարբերությունները զուտ լեզվաոճական կիրառումների ինքնատիպ գործածումներ են, որոնք լավագույնս կիրառել են և՛ Կեննեդին, և՛ Թումանյանը՝ յուրաքանչյուրն իր լեզվամտածողության, հեքիաթի ժանրի ազգային տեսակի ոճավորման տիրույթում՝ պահպանելով բուն նյութի ինքնուրույնությունն ու գունագեղությունը: Անգամ տարբեր տարիների հրատարակություններում Թումանյանը շատ չնչին փոփոխություններ և հղկումներ է կատարել:

Ինչն էր գրավել Թումանյանին այս հեքիաթում: Հավերժ բնությանը ներծուլված, երջանիկ կյանքի վայելքն իր համար կերտած մի կերպարի նկարագրությունը, որն իր ազնիվ, նվիրական զգացումներով պատրաստ էր երկիրը դարձնել կեցության հիասքանչ մի վայր, որը ոչ միայն մրցում է երկնային դրախտի պայմանների հետ, այլև հաղթում, իր մշտական բնակիչը դարձնում աստղաբնակ աղջկան: Ապրելով Կովի գետի /Боевой Река/ ափին՝ հերոսը սիրում էր կարմիր ծաղիկներն ու կապույտ երկինքը ու չնայած նոր ժամանակների տխուր շունչն ազդարարող հրացանների ծնունդին՝ նա անտառ էր գնում իր նետ ու աղեղով զինված:

¹⁵ «Ոսկե դիվան», հեքիաթագիտական հանդես, պրակ 2, «Ձանգակ» հրատ., Երևան, 2010 թ., էջ 60:

Հեքիաթն իր ամբողջության մեջ մի քնքուշ, նուրբ, գունագեղ ու եթերային պատմություն է, որը մարդու մեջ ծնում է բարություն, նվիրվածություն, ջերմ ընտանեկան միջավայրի հաստատման հստակ որոշում: Արդյոք սա չէ մարդկային երջանկության լավագույն ձևերից մեկը:

Այսպիսով, հնդկական երկու հեքիաթների միջոցով էլ Թումանյանը փորձում էր ներկայացնել բնության հետ հարազատ ու միաձույլ ապրելու, արարման բերկրանքը զգալու, վեհ ու վսեմ զգացումներով ապրելու հավերժական և այնքան ուսուցողական պատկերներ: Նրա համար այդ ամենը լոկ երևակայության արդյունք չէր, ոչ էլ հրաշապատում հեքիաթի մեջ պատկերված վերացական աշխարհ: Մարդն իր ձգտումներով կարող է կերտել այն Ոսկի քաղաքն ու մարդկային արժանիքների բարձրագույն որակը, որը երկրային կյանքը կդարձնի կատարյալ և ներդաշն: Գրողին, հեքիաթագետին ու մարդկության ճակատագրով տառապող մտավորականին մնում է հուշել այդ ամենին հասնելու իր բանաձևն ու նախանշած ուղին:

Գ. Ճապոնական հեքիաթներ («Լեզուն կտրած ծիտիկը», «Փոքրիկ ձկնորսը»)

Ճապոնական ժողովրդական բանահյուսության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում հեքիաթները, որոնք աչքի են ընկնում մտահղացման նրբությամբ, լեզվի պատկերավորությամբ, խոհափիլիսոփայական ընդհանրացումներով և դաստիարակչական բնույթով: Յուրաքանչյուր թարգմանական հեքիաթի անդրադառնալիս կրկին համոզվում ենք, որ Թումանյանը որևէ ժողովրդի ազգային տիպը և դիմագիծը բոլորիս հասու դարձնելու համար լավագույն աղբյուրը համարել է հեքիաթը: Մի ժանր, որն իր մեջ խտացնում է յուրաքանչյուր ժողովրդի հեռավոր անցյալը, սովորույթներն ու աշխարհընկալման, չարի ու բարու, լավի ու վատի նրա պատկերացումները: Ճապոնական երկու հեքիաթները, որոնք թարգմանել է Թումանյանը, շեշտված դաստիարակող, մարդու մեջ կրկին մարդը արթնացնելու ազդակներ են, հայկական ժողովրդական հեքիաթների մի յուրահատուկ շարունակությունն ու լրացումը: Այստեղ էլ նկարաբերվում են պարզ մարդկային հարաբերությունները՝ ներծուլված բնության այս կամ այն երևույթի թռչունի, ծովի, բնության այլ տարրերի հետ:

Ե՛վ «Լեզուն կտրած ծիտիկը», և՛ «Փոքրիկ ձկնորսը» հեքիաթները Թումանյանը թարգմանել է ռուսերեն օրինակներից: «Լեզուն կտրած ծիտիկը» թարգմանելիս՝ Թումանյանը նկատի է ունեցել ռուսական «О Воробье с отрезанным языком» գրքույկը: Իսկ հրատարակության պատրաստելիս, ինչպես այս, այնպես էլ «Փոքրիկ ձկնորսը» հեքիաթի դեպքում պահպանել է բնագրային նկարագրողությունները, որոնք պատկերում են ճապոնացիների կյանքն ու կենցաղը, նրանց ազգային տարազն ու զարդարանքը:

Հեքիաթն իր թեթև ու պարզ բովանդակությամբ մի շնչով կարդացվող հեքիաթներից է, որը, սակայն, ներքին բովանդակությամբ խիստ դաստիարակչական է. ազահությունից ծնունդ առած չարը ստանում է իր արժանի պատիժը, եթե այդ ճանապարհով ժողովուրդը փորձում է կանխել նույնի վերածնունդը:

Թարգմանության ընթացքում ձեռքի տակ ունենալով ռուսերեն թարգմանությունը՝ Թումանյանը, այդուհանդերձ, այս դեպքում ևս հարազատ է մնացել հեքիաթի ժանրին բնորոշ մի շարք առանձնահատկությունների, որոնք բացակայում են ռուսերեն տարբերակում: Կարևորագույն հանգամանքն այն է, որ հեքիաթը պատմողական ժանրի ստեղծագործություն է, որի մեջ կարևորվում է երկարաշունչ նախադասությունների բացառումը, ժողովրդական բառ ու բանի կիրառումը, ավելորդ բառերից հնարավորին չափ խուսափելը:

«Փոքրիկ ձկնորսը» ճապոնական հեքիաթը թարգմանելիս Թումանյանը ձեռքի տակ ունեցել է ռուսերեն մի քանի տարբերակներ: Թարգմանության հիմնական աղբյուր դարձրել է Միտինի «Урасима или маленький рыбак» հրատարակությունը, մասամբ օգտագործել է նաև Պորոզովսկայայի՝ գերմաներենից կատարած թարգմանությունը:

Ինչպես նախորդ հեքիաթների թարգմանության, այնպես էլ այս դեպքում Թումանյանը երբեք կուրորեն չի հետևել հեքիաթի ռուսերեն թարգմանական տարբերակներին: Հեքիաթի ընտրությունը միշտ ունենում էր որևէ պատճառաբանված հիմք. այն է, թե ինչ ասելիք ունի հեքիաթը, բարոյախրատական ինչ ավարտ և խոհափիլիսոփայական ինչ խորություն: Եթե ռուսերեն տարբերակներում մի ձկնորսի կյանքի պատմության չոր շարադրանք է ներկայացվում, ապա մեկ-երկու նախադասություններ ավելացնելով՝ թումանյանական թարգմանության մեջ շեշտվում է հեքիաթի հիմնական գաղափարակետը և դրա դաստիարակչական նպատակը:

Շատ հաճախ անհարկի երկարաբանությունները Թումանյանը խտացրել է մեկ բառի կամ արտահայտության մեջ, որն ավելի խոսուն և հնչեղ է դարձնում հեքիաթի գաղափարը:

Ճապոնական այս փոքրիկ հեքիաթում երիտասարդ ձկնորսի կերպարում Թումանյանին գրավել է մարդկայնության վեհ տեսակի պահպանման և հայրենիքի հանդեպ անսահման սիրո գաղափարը: Քիչ չեն այնպիսի վիպերգերը, հեքիաթներն ու ավանդապատմաները, որտեղ հերոսներն անմահության և հավիտենականության ճանապարհը որոնում են՝ հրաժարվելով հայրենիքից, ծնողների նկատմամբ տածած սիրուց: Մինչդեռ իրական անմահությունը հենց այս գաղափարների՝ աներկմտելի նվիրումի մեջ է:

Դ. Արաբական հեքիաթ («Անգին քարը»)

Արևելքի հեքիաթի գանձարանից Թումանյանը ընտրել և թարգմանել է նաև մեկ արաբական հեքիաթ, որը Հարուն Ալ Ռաշիդ քաջ ու արդարադատ թագավորի գահակալության տարիներից մի իմաստուն գրույց է: Որպես հիմք՝ Թումանյանը վերցրել է Չիստյակովի կազմած «Весна. Новые повести и рассказы» /СПб., 1903/ ժողովածուում ընդգրկված «Драгоценный камень» հեքիաթը:

Բովանդակային պլանում սա ևս մի քայլ է՝ մարդուն մարդկային արժեքներով դաստիարակելու, դեպի ազնիվը, բարին ու իմաստունությունը մղելու: Խղճմտանքը պետք է լինի թագավորի, դատավորի, հարուստի ու աղքատի կյանքի ուղեկիցը: Հեքիաթը հյուսված է արևելյան հանդարտ ասացության ոճով, այնտեղ չկան յոթ գլխանի վիշապներ, կախարդական աշխարհ, չարքեր ու դևեր, ամեն ինչ այնքան կենդանի է, բնական ու պատկերավոր:

Ինչպես նախորդ, այնպես էլ արաբական այս հեքիաթի թարգմանության ընթացքում Թումանյանը հետևել է ռուսերեն տարբերակում նկարագրված գործողությունների շարադրանքի ընթացքին: Բայց, այդուհանդերձ, Թումանյանը կրկին հանդես է գալիս իր՝ հեքիաթի ժանրին գիտակի բնութագրական ճշգրիտ խմբագրումներով՝ ամեն անգամ դուրս թողնելով երկարաշունչ նկարագրական այնպիսի հատվածներ, որոնք որևէ կերպ չեն օժանդակում հեքիաթի խորիմաստ բովանդակության արտահայտմանը: Ավելին՝ հաճախ այդ պատկերները դառնում են ինքնանպատակ ու ձանձրալի, և ընթերցողին վանում՝ շարունակելու ընթերցանությունը: Թումանյանն առատորեն կիրառել է ժողովրդական բառ ու բանը, հերոսի կերպարին համարժեք խոսքային ոճեր, դարձվածքներ ու թևավոր խոսքեր: Այսպիսով՝ Թումանյանն ընտրելով արևելքի գանազան երկրների հեքիաթների գանձարանից խորիմաստ, ճշմարիտ արժեքներ սերմանող և համամարդկային խոհեր ներառող փայլուն բանահյուսական նմուշներ՝ լրացնում ու ամբողջականացնում էր իր մտորումների բազմաբևեռ տարածությունը: Իսկ այդ ամենի կենտրոնում մարդն էր, նրա երջանկությունը վերագտնելու որոնումները:

Հեքիաթագրության և օտար հեքիաթների թարգմանության իր վարպետությամբ մինչ օրս էլ ոչ միայն հայ գրականության, այլև համաշխարհային բանահյուսական նյութի մշակման տիրույթում Թումանյանն ունի իր ուրույն և կայուն տեղն ու դերը: Հեքիաթամշակաման նրա ավանդներն ու ելակետային ուղենշումները հավասարապես կարող են դրվել Պուշկինի, Գրիմ եղբայրների և այլ համաշխարհային հեքիաթագետների կերտած հեքիաթամշակման չափորոշիչների շարքում:

Քննելով Հովհ. Թումանյանի քննադատական և թարգմանչի գրական ժառանգության՝ արևելյան թեմային վերաբերող հետաքրքրությունների լայն շրջանակը, կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Մանկությունից ծննդավայրի աշխարհագրական դիրքով և առասպելական բնությամբ պայմանավորված վերերկրային խոհերը տարիների կենսափորձի հարստացմամբ բանաստեղծին ուղղորդում են փիլիսոփայական այն ոլորտները, ուր ներդաշնակվում էին արթնացող հանճարի գիտակցական ու ենթափոսակցական խոհապատկերները:

2. Որոնումների երկարատև ճանապարհները կյանքի հասուն շրջանում նրա հայացքն ուղղում են դեպի իմաստության լուսի ալյուր՝ «Արևելքն աստվածային», որտեղ էլ տարբեր ժանրերի գործերում Թումանյանը փորձում է գտնել նախ ինքն իրեն, ապա դրան հաղորդակից դարձնել իր շրջապատին ու իր ընթերցողին:

3. Արևելյան մշակույթների հետ հաղորդակցվելու լավագույն եղանակը բանաստեղծի համար դառնում է թարգմանությունը: Ու հենց այդ ճանապարհին էլ Թումանյանն իր համար հայտնաբերում է չին, հնդկ և պարսիկ ժողովրդների մշակույթը և այդ մշակույթն ստեղծած մեծերին:

4. Թումանյանի թարգմանությունները պատահական, դիպվածային, ինքնանպատակ չեն: Դրանք յուրովի արտահայտում են բանաստեղծի հոգին հուզող մտահոգությունները, արձագանքում են ժամանակի արդիական ու հրատապ խնդիրներին: Այս իմաստով՝ Թումանյանի թարգմանությունները ոչ միայն իրենց որակական հատկանիշներով համարժեք են բնագրերին, այլև նրա գեղարվեստական ժառանգության անկապտելի բաղադրիչն են, ինքնուրույն ստեղծագործության արժեք են ներկայացնում:

5. Բանաստեղծական խոսքի գերխտացումների իր ձգտումներից մղված՝ նա պարսից գրականության մեջ գտավ նախընտրելի ձևը՝ քառյակը, թարմանաբար յուրացրեց և ինքն էլ ստեղծեց ժանրի չեղանցված նմուշներ, որոնք դարձան իր հոգու կենսագրության «ուժեղ շտրիխները»:

6. Կիրառելով դարերի կնիքն իր վրա կրող ժանրաձևը՝ քառյակը, Թումանյանը ժամանակակից բովանդակություն հաղորդեց դրան՝ հասնելով խոհափիլիսոփայական հզոր թոփքների, որոնք քննադատի համար բաց են անում ծավալվելու լայն ասպարեզ, ընթերցողի համար՝ մտորելու անափ տարածություն, իսկ գրողի համար՝ արտաքին ու ներքին աշխարհների ներդաշնակությունը ստեղծագործաբար վերապրելու երջանիկ հնարավորություն:

7. Իր քառյակների ինքնակերտ աշխարհը Թումանյանը կյանքի վերջում յուրովի ընդարձակեց պարսիկ բանաստեղծներ Օմար Խայամի, Հաֆեզի, հատկապես Խաքանիի քառյակներից կատարած թարգմանություններով:

Դրանք Արևելքի հետ հայ բանաստեղծի հոգեղեն կապի առավել խոսուն վկաներն են:

8. Հովհ. Թումանյանի ստեղծագործական ժառանգության մեջ ծանրակշիռ որակ է կազմում հեքիաթը: Ժողովրդական բանավեստի մեջ բացառիկ տեղ վերապահելով հեքիաթին՝ Թումանյանը չբավարարվեց միայն հայկական ժողովրդական հեքիաթների ուսումնասիրությամբ և մշակմամբ: Մշտապես նրա ուշադրության կենտրոնում էին նաև այլ ժողովուրդների բանահյուսական նյութերը, այդ թվում նաև արևելյան հեքիաթները:

9. Արևելքի ժողովուրդների իմաստության ու մշակութային պատկերացումների բարձրագույն արտահայտությունը համարելով հեքիաթները՝ Թումանյանը ոչ միայն անգերազանցելի արվեստով թարգմանեց ու փոխադրեց հնդկական, ճապոնական, արաբական շատ հեքիաթներ, այլև բուն իմաստով հայացրեց դրանք՝ հարստացնելով ու ընդարձակելով հայ ազգային հեքիաթագրական մշակույթի սահմանները:

10. Թումանյանի փոխադրած արևելյան հեքիաթների շարքում առանձնանում են «Ոսկի քաղաքը» և «Անգին քարը»՝ ոչ միայն իրենց գեղարվեստական կատարելությամբ, այլև նրանով, որ ամենից որոշակիորեն են կիզակետված Թումանյանի մտածողի ու գեղագետի հասարակական ու բարոյական իդեալները, որոնք այս կամ այն կերպ արտահայտություն են գտել նրա բազմաժանր ստեղծագործության բոլոր էջերում:

11. Ինչպես քառյակների պարագայում, այս դեպքում էլ թարգմանվող նյութի թումանյանական ընտրությունը ծրագրային հետևողականություն ունի, որ ուղղակիորեն բխում է նրա փիլիսոփայական ու գեղագիտական աշխարհայեցության բուն ակունքներից՝ մի նոր կողմից լրացնելով ու ամբողջացնելով բանաստեղծի ստեղծագործական աշխարհի միասնական ու ներդաշնակ համակարգը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՀՈԴԿԱՍԵՐ

1. «Հովհ. Թումանյան և իշխանուհի Մարիամ». նամականի, կազմող և ծանոթագրող՝ Անի Եղիազարյան, Երևան, 2010, 174 էջ:

2. Հովհ. Թումանյանը Խաքանիի քառյակների թարգմանիչ, «Երիտասարդ գրականագետների հանրապետական գիտաժողով նյութեր», Երևան, 2013, էջ 5-14:

3. «Լուսաբեր» դասագրքի ստեղծման պատմությունը, «Հասկեր», թիվ 3, Երևան, 2013, էջ 72-81:

4. «Լեզուն կտրած ծիտիկը» ճապոնական հեքիաթի թումանյանական թարգմանությունը, «Ոսկե դիվան», պր. 4, Երևան, 2014, էջ 45-59:

ЕГИАЗАРЯН АНИ ТИГРАНОВНА
ОВ. ТУМАНЯН И ВОСТОК

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.01 – “Армянская классическая литература”. Защита диссертации состоится 16-го мая 2014 г., в 15:00, на заседании специализированного совета ВАК 003 “Армянской и зарубежной литературы”, действующего в Институте литературы имени М. Абегамяна НАН РА. Адрес: г. Ереван, ул. Г. Лусаворича, 15

РЕЗЮМЕ

Диссертация представляет обширный круг интересов поэта и переводчика Ованеса Туманяна относительно Востока и восточной тематики. Обусловленные географическим положением и сказочной природой родины детские возвышенные раздумья, обогащенные последующим жизненным опытом, приводят поэта в сферы философской гармонии сознательных и подсознательных мыслеформ. Долгие и упорные искания в зрелом возрасте направляют его взор к истокам мудрости и света – к “божественному Востоку”, где Туманян в произведениях различных жанров сначала пытается выразить себя, а затем приобщить к этому свое непосредственное окружение и своего читателя. Для поэта наилучшим средством приобщения к восточной культуре становятся переводы. И именно на этом пути Туманян открывает для себя культуру народов Китая, Индии и Персии и великих творцов этой культуры.

Переводы Туманяна не случайны и не являются самоцелью. Они в своеобразной форме выражают волнующие душу поэта проблемы, являются откликом на современные ему актуальные жизненные вопросы. В этом смысле переводы Туманяна не только равносильны подлинникам, но и являются неотделимой частью его художественного наследия и равноценны самостоятельным произведениям. Исходя из стремления к наивысшей лаконичности поэтического слога, он выявил для себя предпочтительную форму в персидской литературе – четверостишия, которую освоил посредством переводов, а затем создал непревзойденные образцы этого жанра, которые стали “сильными штрихами” биографии его души.

В творческом наследии Ов. Туманяна весомое место занимает жанр сказки. Отводя сказкам исключительное место в фольклорном творчестве, Туманян не ограничился изучением и обработкой только армянских сказок. В центре его интересов всегда было фольклорное

наследие других народов, в том числе и восточные сказки. Считая сказки наивысшим проявлением мудрости и культурного мировосприятия восточных народов, Туманян не только блестяще перевел многие индийские, японские и арабские сказки, но и в прямом смысле арменизировал их, тем самым обогатив армянские фольклорные традиции и расширив их границы.

Таким образом, предметом нашего исследования являются относящиеся к восточной литературе образцы переводческого творчества Туманяна, а также произведения самого поэта, созданные в традиционных жанрах этой литературы. Целью и характером исследуемого материала обусловлена структура диссертации, которая включает введение, три главы со своими подразделами, заключение, список использованной литературы и приложения.

В введении кратко представлены историческое развитие рассматриваемого вопроса, его актуальность, анализ выявленных нами литературно-ведческих исследований, посвященных различным аспектам данной темы.

В первой главе (“Туманян как личность и писатель в параллелях восточной жизненной философии”) в целом представлен большой интерес Туманяна к истории, религиозному мышлению и литературно-культурному наследию Востока. В ряду этих интересов особое место отведено индийской, китайской и персидской культуре и художественным формам ее выражения. Этот пласт переводческой деятельности Туманяна имеет выраженную причинно-следственную связь, а именно: соответствие современного ему исторического периода художественному мышлению поэтов востока, и это становится в какой-то мере способом и опосредованной формой выражения раздумий самого Туманяна как гражданина и общественного деятеля. Из произведений Конфуция, Ли Тай По и других авторов Туманян избрал именно те, которые имели отклик в современности, а также отражали общечеловеческие проблемы.

Во второй главе (“Четверостишия как биография души поэта”) рассматриваются наиважнейшие образцы зрелого периода творческой жизни Туманяна – четверостишия, которые благодаря предельно сжатой форме являются сгустками философского мышления поэта, а также их непосредственная связь с восточной, главным образом персидской, литературой. Впервые подробно рассматриваются туманяновские переводы именно персидских четверостиший. Применяя метод сравнительного анализа, мы попытались выявить качественные и художественные признаки четверостиший Хакани в переводе Туманяна,

а также представить их философски осмысленную трактовку с точки зрения Туманяна-критика.

В третьей главе ("Туманяновские переводы восточных сказок") представлены и рассмотрены туманяновские принципы перевода художественной прозы, в частности, восточных сказок. Туманян, продолжая дело расширения горизонта армянской детской литературы в аспекте ее воспитательного значения, свою сокровищницу обработок армянских народных сказок обогатил и оживил разноцветной палитрой таких глубоких и содержательных мировых сказок, которые выражали мысли самого переводчика-сказочника и придавали целостность всему содержанию его задушевной беседы с армянскими детьми.

Имея ввиду уже существующие исследования в этой области, в качестве дополнения, путем анализа выбора, перевода и целей писателя, сделана попытка более целостно представить роль и значение этих произведений в едином пространстве мышления Туманяна-сказочника. Мы попытались выявить ту мощную систему символов, которую с таким мастерством применил Туманян в чужеземных сказках, осенив их своим талантом. Из сказок восточных народов Туманян перевел индийские, японские и арабские сказки, которые рассмотрены в соответствующем подразделе третьей главы.

В 1-ом приложении приведен список литературы относительно Востока, хранящейся в личной библиотеке Ованеса Туманяна. Во 2-ом приложении представлены отписки с клише иллюстраций к сказке "Золотой город", сделанные по заказу самого поэта. Они хранятся в музее Ованеса Туманяна.

ANI TIGRAN YEGHIAZARYAN

HOVH. TOUMANYAN AND THE ORIENT

Dissertation to obtain the degree of a candidate of science of Philology with the Specialty of 10.01.01 – "Armenian Classical Literature". The defense will take place on the 16 of May 2014, at 15:00 o'clock, in the specialized Council 003 of "Armenian and Foreign literature" at the Institute of Literature of National Academy of Science after M. Abeghyan.
Address: 15 Grigor Lusavorich, Yerevan

SUMMARY

The dissertation material refers to Hovhannes Toumanyan as a writer and translator's literature inheritance for a wide frame in oriental theme.

Since childhood due to the geographical location of his hometown and mythic nature together with enrichment of the years' life-experience guided the poet to philosophical spheres, where conscious and subconscious thoughts of genius were being harmonized. His long-term search in the period of adolescence make him turn to wisdom, the light "Divine East" where in compositions of different genres Toumanyan tries to find himself and then make it known for people surrounding him and his readers.

Translating becomes the best way of communicating with eastern culture for the writer. And exactly on the way of it he discovers Chinese, Indian and Persian culture and the creators of it. Toumanyan's translations aren't accidental, episodic and self-aimed. They uniquely express the writer's anxieties, respond to modern and urgent problems.

In this sense Toumanyan's translations aren't only equivalent to those originals by its qualitative features but are also inalienable components of his literary inheritance.

Due to the aspiration of the densification of his poetic speech he found a preferable form of Persian literature: quatrain, assimilated it and he himself created excellent items, which became the powerful determiners of his soul biography.

Fairy tales form a weighty quality in his creative inheritance. Having a special concern about the folk tales Toumanyan wasn't limited by the study and handling of Armenian fairy tales only. In the center of his attention were also other peoples' folk tales materials, including also eastern fairy tales.

Considering fairy tales as an expression of eastern people wisdom and cultural ideas, Toumanyan not only skillfully translated and transformed Indian, Japanese and many Persian fairy tales, but also with the essential meaning made them Armenian enriching and extending the borders of Armenian fairy tale culture.

Thus the material of our study are Toumanyan's translations concerning items of eastern literature and also the implementation of typical genres in his compositions and creating his own.

The structure of dissertation comprises of Introduction, three chapters with their sub-chapters, conclusion, literature references and appendices.

In the introduction there is a brief recurrence of the materials history, its modernity and literal analysis in the frames of the material.

In the first chapter ("Toumanyan as a human and a writer in the counterpart of eastern life philosophy") Toumanyan's general interests about eastern history, religious thoughts and literal culture is introduced. In those interests a special place have especially Indian, Chinese, Persian culture and its art forms. This layer of Toumanyan's translating activity has an emphatic reason

connection: it's the identification of the historical period and the thoughts of eastern poets, which for some extent became the translator of expression forms and Toumanyán's thoughts as a citizen and a public activist.

Among the compositions of Confucios, Li Tai Poy and other writers' compositions Toumanyán chose the ones having popularity in his days and which also comprised problems of humankind.

In the second chapter ("Quatrains as a soul biography of the writer") is represented the philosophical ideas of quatrains and their assimilation to oriental, especially Persian literature.

For the first time a recurrence is done especially of Persian quatrains translated by Toumanyán. Due to the method of comparative analysis there is made an attempt to discover Toumanyán's Khakani's qualitative and aesthetic features, as well as philosophical exegesis from the point of Toumanyán as a critic.

In the third chapter ("Toumanyán's translations of oriental fairy tales") prose works, more exact, the principles of oriental fairy tales translation by Toumanyán are analyzed and represented. Going on with broadening the educative horizon of Armenian children's literature, Toumanyán made the treasury of Armenian folk tales more colourful and enriched the universal fairy tales with such profound and meaningful list of creations, which expressed thoughts of translator-fairy tale writers and generalized the whole content of his speech addressed to Armenian child.

Having before us the already done analysis, in addition to it, we've made an attempt to generalize the role and significance of fairy tale writer Toumanyán unitary range of thinking.

An attempt is made to discover the powerful systems of symbols, which was so skillfully implemented by Toumanyán in foreign fairy tales, thus in this way being recognized as a real genius. Toumanyán translated Indian, Japanese and Persian fairy tales, to which a recurrence is done in the corresponding sub-chapters of the third chapter.

In appendix 1 the list of Toumanyán's personal books referring to Orient is represented.

In appendix 2 the fairy tale cliché images of "Golden city" ordered by Toumanyán are represented, which are kept in Hovhannes Toumanyán's museum.



